Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԺԱՌ-ԱԳԱՅՐ
1914
1 գրք.
թիվ 2հակ

891.99-82
Ժ-32

2001

891.99-82

ՀԱՍԱԳԱՅԹ

Գրական գեղարուեստական եւ քննադատական
ժողովածու

Ի ԿՐԹՈՒԹԵՒՆ

891.99-82
Հ-32

2 013

ԹԻՖԼԻՍ
Էլեքտր. տպարան «Է Պ Օ Խ Ա», Մուզեյսկի № 8.
1914

891.99-82
Ծ-32

ԺԱՌԱԳԱՅԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՐԱՆ

Գրական գեղարուեստական եւ քննադատական ժողովածու

1001/2309

I ԳՐՔՈՑԿ

ԹԻՖԼԻՍ
Էլեքտր. տպարան «ԷՊՕԽԱ», Մուզեյանի № 8.
1914

(4599)

6893-lhh.

ԵՐԿՈՒ ԵՐԳ

Գարուն էր, գեղածիծաղ վառ գարուն։

Արեգակի ճառագայթները ոսկեզօծել էին կանաչ բլուրկները ու արեի տակ ամեն ինչ նոր կենդանութիւն էր ստանում։ Սոխակը գտել էր իր սիրատենչ վարդը· վերջին մահուան ըսպէն կապոյտ մանուշակը պարուրել էր իր կանաչ վերմակում ու ննջում էր յաւիտեան չզարթնելու, մինչև իր կողքին նոր գարնանը կբուսնի մի ուրիշը։

Բնութեան այդ պահուն, ես իջայ անտառը, նա որքան գիւթիչ էր հմայիչ, այնքան խորհրդաւոր ու կախարդական։ Մենակ էի ես. մենակ ու անընկեր, ինձ գուրգուրող, ինձ փաղաքշող մի կարեկից սիրտ չկար. կարծես ամեն ինչ բնութեանն է վիճակուած վայելելու, իսկ ես մենակ էի ու անսփոփանք...

Ու սիրտս անորոշ զգացմունքից ալիծուփ ովկիանի պէս ելաւ զգացի, որ նստած եմ կեանքի այն նաւակում որ գոռ փոթորիկների տակ տարուբերուում էի անհընդատ. գուցէ այդ նաւակը խորտակուի ու ես էլ....

Սարսափելի... որքան փոթորկալից է երիտասարդ հասակը, այնքան վտանգաւոր ուղիներ բռնած. ես էլ բռնեցի կեանքի մեծ ուղին. իսկ ո՞ւր էր տանում նա, և ինչ նպատակով ես քայլեցի դէպի հեռուն, գիւղից դուրս մանկութիւնից այդ ուղիները շատ էի տեսել, իսկ այժմ քայլում էի անյոյս անպատակ... որքան երկար էր այդ ուղին. ու ես քայլում էի անտրտունջ ոտքերս չէին դաւաճանում մարմնիս, որ ոսկրացած մի ցաւի կոյտի նման ճնշում էին նրան...

Ճանապարհին ոչ ոք չկար. ոչ մի շունչ, ոչ մի արարած. մենակ ես էի որ քայլում էի առաջ ու առաջ ու ուղեղս չէր յոգնում ցաւերը գուշակելուց. երազները հիւսելուց։

Մենակ էի, ու միևնոյն ժամանակ զգում էի որ մէկը ու-

ղեկցում է ինձ. անտես ու անձայն. նա իմ վիշտ կոչուող ընկերս էր, որ ծնունդիս օրից եղել է ինձ հետ ժտերիմ և միակ անբաժան ընկեր... իսկ այժմ նա կարծես ղժգոհում էր ինձ ընկերակցելուց որ որոշել էր իրեն բաժին հոգին խլելու, իսկ ոսկրացած ցաւի կոյտը, անշունչ դիակս թողնելու ընկած այն մեծ ճանապարհին, ինչպէս ծաղիկը թողնում է տափ անապատում, այնպէս էր թողնելու էր անշունչ դիս...

Չգիտեմ որ կողմից խենթ քամին սուլեց... հովը մեղմիկ զեփիւռով շոյեց իմ ճակատը, ու սիրտս փղձկած, հեծեծաց,... քամին էլ ազատութիւն ունի. ու նա էլ գիտէ ծաղրել մարդ էութիւնը։

Ու սիրտս հեծեծած. հին հին վէրքերով, իմ շրթունքները մեղմ ղողդողացին ու մի երգ հուսեցին ձայնակցելու խենթ քամու ձայնին. ու ես երգեցի, մի երգ, որ երբէք ծպտեալ ընկերս չէր ցանկանա...։

Սիրոյ երգն էր այդ. սևակ աչքերի, գողտրիկ հմայքների սիրած զոյգը աչերի մաքուր իդէալական մի սիրոյ երգ... Սէր նա էր իմ երգը հիւսողը, նա էր իմ երազներ հիւսողը, իսկ ես մրմնջում էի այդ երգը։

Լուռ էր ամեն ինչ. անորոշ տարածութեան մէջ միայն ոտքերիս համաչափ քայլերի ձայնն էր որ խանգարում էր խորհրդաւոր լռութիւնը...

Հեռուից մի ձայն լսեց, անորոշ և զարմանքից յուզեցի, ու ընդհատեցի իմ երգը։ Ձայն հնչում էր պարզ և երերուն. ըստ երևոյթին նա էլ տանջած հոգուց էր հնչում, նա էլ ուրախութիւն չէր ներշնչելու իմ սրտին...

«Ես սարէն կուգայի, դու դուռը բացիր,
Ձեռքդ դրիր ծոցդ, մխ արիր լացիր...
Եար տանում են, տանում են,
Ինձանից հանում են»...

Այսպէս երկար հնչում էր երգը ու մօտենում, գլուխս վերը բարձրացրի, երգողը մի ծերունի էր, վտիտ, որպէս գերեզմանից հանած մի դիակ. ահագին մորթը փափախը ականջները քաշած, պանդխտութեան գաւազանը ձեռքին, ու մաղախը ձերքին անդուլ քայլերով առաջ էր գնում։

—Բարև քեզի աղբէր.

—Աստծոյ բարին—պատասխանեցի ես որտեղից եռ գալիս։

—Զուլումի երկրից. չգինամ ինչ ըրաւ էն անիրաւ զուլումը.

—Ինչ զուլում, հետաքրքրութեամբ հարցրի ես։

—Զուլում էր էլի էկաւ, գնաց, տեղը թողնալով անհաշիւ վածների...

—Որտեղացի ես—կարծես այլևս չլսելով հարցրի ես կրկին.

—Զուլումի երկրից, ծերունու պատասխանները ինձ անհասկանալի էր թւում.

—Զուլումի երկրից... որ զուլումի. աշխարհը բովանդակ զուլում է, ամեն ինչ զուլում. ասա որ զուլումն ես տեսել...

—Շատ զուլումներ եմ տեսե բալա, բայց ցրտի զուլումը։

—Ցրտի զուլումը, մեքենայարար կրկնեցի ես. ցրտի զուլումի մասին լսել էի. ու ամեն անգամ միտս ընկնելիս փշաքաղւում էի, այս անգամ էլ ուզեցի մոռացման տալ, ու փոխելով էական հարցը հարցրի...

—Բիձա որ ցուրտը տարաւ, դու ուր ես գնում հիմա.

—Աշխատելու՝ կրկնեց նա իսկոյն—հինգ մանր բալա ունեմ ախար, վար ու ցանք չունեմ, տուն ու տեղ չունեմ, գընում եմ աշխատեմ ճակատիս քրտինքով նրանց ազատելու սովից աւաղ, պարտքը, «ժղան» բալիկներս...

—Որտեղ պիտի գնաս բտղդ որոնելու.

—Աստծոյ մօտ գանգատ պիտի գնամ, չէ որ նա օղորմած հերէ մի ճամբա ցոյց կտա.

—Խեղճ, որտեղ պիտի գտնես Աստծուն նա հեռու է...

—Ձեմ գտնի, կաշխատեմ գտնելու. կտանջւեմ, կչարչարւեմ, 5—10 կոպ. իրար վրա կդնեմ, կբերեմ քանդւած օջաղս կշինեմ ու... Աստուած կերևա...

Ու ծերունին ամուր սեղմեց իմ ձեռքը, զոյգ արցունքներ գլորւեցին նրա ոսկրացած արտևանունքների վրայից, ապա կոշտացած ձեռքը վեր բարձրացրեց, սրբեց աչքերը, ու առաջ անցաւ. ես մոռացայ իմ երգը, սիրոյ երգը կեանքի և գոյութեան երգի առաջ չքացաւ... Մոռացայ իմ վշտերս, մոռացայ ամեն ինչ, ու այժմ իմ սրտի վրա թառել սկսեց ուրիշի վիշտը. կրկին անորոշ քայլերս առաջացրի... ծերունին հեռանում էր. ու ես լուռ էի խորին վշտով համակւած, ու դարձեալ լուռ էր

ամեն ինչ. ծերունին էր միայն, որ քայլում էր քայլում ու մերթ մեղմ ու կլկլալէն երգում.

«Կանչի՜, կռունկ կանչի, քանի գարուն ա,
Ղարիպները սիրտը լիքը արուն ա եար
Եար եար, ղարիպ եմ եար եար.,.

Միսակ Յովհաննիսեան
Օշական

ԸՆԿՆՈՂ ՅՈՅՍԵՐ

Ծարաւած յոյզի, տենչի, կարօտի,
Յայտնուեցիր ինձ երազի նման.
Հեռացար հեռու դու օտարօտի,
Իմ սրտիս փէրի, իմ սէր աննման։

Եւ որպէս պատրանք, անուրջ երազից,
Հեռացար ինձնից սիրտս խոցելով,
Հեռացար անյոյս, ու ինձ մոռացար
Ես էլ հեռացայ բաղդս անիծելով։

Հեռու դաշտերում շրջում եմ անյոյս,
Որտեղ սէգ լոյսի ցոլքերն են մարում,
Ընկան իմ աստղերն անհուն երկնքից
Ընկան, մարեցին անհուն եթերում...

Ու այնուհետև գիշերուայ ժամին,
Աչքս խուփ կամ բաց քեզ եմ սպասում,
Երազն է միայն անյոյս շողշողում,
Ու անհետանում, ու անհետանում...

Մ. Փայլուն

*
* *

Երազներ, եկէք հեռու ափերից
Պարուրէք հոգիս դիւթող հմայքով,
Արցունքներ եկէք, այրող սրտերից,
Թափուէք սրտիս մէջ, մութ ու սև փայլով։

Անուրջներ, եկէք հովիտ ձորակից,
Գրկէք իմ հոգին տարէք շատ հեռու,
Երազներ եկէք փրփուր ծովակից
Տարէք ձեր գիրկը, հեռու շատ հեռու...

Ննջել եմ ուզում ծովի խորքում,
Երազներ, եկէք թոցրէք տարէք,
Ննջել եմ ուզում ալիք ծալքերում,
Քամիներ եկէք յուշերս տարէք...

Ծովն էլ է մի կեանք, ու երջանիկ կեանք,
Երազներ եկէք, ինձ տարէք տարէք,
Անուրջներ եկէք որ ես արբենամ.
Քամիներ եկէք սրտիս հով արէք..

Ծովն օրօրներ կասի, կննջեմ
Ալիքներ մռայլ երազ կպատմեն,
Ծովի խորքերում մի կեանք կշնչեմ,
Իսկ սև դարդ, ցաւ Էր կանցնեն կանցնեն...

Տարազիր

ՄՆԵՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐԻՑ...

Չկայ մի մարդ որ փարատէ,
Իմ խոր ժխոր վէրքերը,
Չկայ նաև այն էակը
Որը ցոյց տա իր սէրը...

Չկան այստեղ ընկերներս,
Որ իմանան իրձերս,
Չկան այստեղ իմ քոյրերս
Որ սփոփեն վշտերս...

Չկայ այստեղ ոչ ծառ, ծաղիկ,
Որ պատմեմ իմ դարդերը.
Չկայ այստեղ այն սոխակը,
Որ երգէ իր սէրը.

Եւ վերջապէս չկայ և նա
Որ դարդերս ես պատմեմ,
Ես մենակ եմ ու վհատուած,
Ես անտէր եմ անընկեր...

Տաճատ

ԱՌԱՆՑ ՏԵՍՆԵԼՈՒ

(Պատմուածք)

I

Յակոբիանցի ընտանիքը հիւրի էր սպասում. վաղը գալու էր ընտանիքի հայրը, պարոն Ստեփանի վաղեմի ամենամտերիմ և սրտակից բարեկամի որդին՝ Տիգրանը. դեռ տասնուհինգ տարի էր որ նրա հայր Միքայէլը Ստեփանի յուսով թողել էր իր 8 տարեկան Տիգրանին կնքել էր իր մահկանացուն։ Վերջինս կատարել էր ընկերոջ իր վրա դրած պարտականութիւնը հէնց նոյն տարին ուղարկել էր մանուկին մայրաքաղաք իր հեռաւոր ազգականի մօտ, այնտեղ կրթութիւն տալու։

Անցել էր տասնուհինգ տարի և ահա Տիգրանը գալիս էր հայրենի գիւղը, արդէն կերպարանափոխուած, բարձրագոյն կրթութեան վկայագիրը ձեռքին ամուր սեղմած...

Տիգրանի գալուստը արդէն իմացել էր փոքր գիւղաքաղաքի բնակիչների մեծ մասը, և որոշ հետաքրքրութիւն էր մտնում ամէնքի սիրտը, տեսնել Տիգրանին և ջերմ կերպով յայտնել իրանց համակրանքը որ գալիս է գիւղ մթութեան մէջ նոր լոյսի կայծեր սփռելու։

Լուռ ու մտախոհ էր միայն պ. Ստեփանի դուստր փոքրիկ Արնահատը, որի տարիքը հասնում էր 15-ի Տիգրանի գալստեան լուրն առնելու պէս, նա ըստրտվին այլայլեց. Չնայած որ ինքը Տիգրանի հետ ծանօթ էր միայն նամակագրութեամբ, բայց իր հոգին զգում էր որ կապուած նրա հոգու հետ։ Երեկուայ հեռագրից յետոյ նա շարունակ ծնողներից առանձնացած երկար մտածում էր Տիգրանի վրա ու երազում նրան. բայց որքան ծանր էր ու սպանեցուցիչ սպասումն այդ վարկեանները։ Նա դեռ Տիգրանի դէմքը չտեսած, արդէն նրանով էր ապրում։

Առաւօտ էր. կայարանում կանգնած հայր ու աղջիկ սպասում էին գնացքի գալուն քիչ յետոյ հեռուից երևաց թանձր

ծխի քուլաներին մի սև սիւն, ու գնացքը հակայ դղրդիւնով կանգնեց կայարանի առջև։

Երկրորդ կարգ վագոնի նախասենեակի դռան առաջ եւ բևեռ մի առաջ և բարձրահասակ երիտասարդ, ազնիւ սիրուն ուրախութիւնից, ու անասելի յոյզից ճմլուեց. երիտասարդը իր խնամակալներին տեսնելուն պէս վրայ վազեց ու ջերմ երախտագիտութեան արտասուքը աչքերին և նեռուելով ապ. Ամենքն զբաղուեցան ուրախութիւնից լայ եղաւ, ապա նիկատեց արնահատին, ամուր սիրեցին նրա ձեռքը ու վերջին չկարողանալով զսպել իր յուզմունքը լայ եղաւ, նրանք կատաղեցին ու շտապեցին տուն, այնտեղ գիւղական մի համեստ խրճիթում ճաշի սեղանը պատրաստած, սպասում էր Ամենքին կին Աստուածը...

II

Ժամանակը Տիգրանի համար անցնում էր շատ ուրախ ու երջանիկ. Բանկովբեան ամուսիններդ արդ. զաւակ չունենալով, վաղուց որդեգրել էին Տիգրանին, որոնց վերաբերմունքը դէպի նա շատ սիրալիր էր ու գորովալից. նրա միակ երջանիկութիւնը օր. Այնահատան էր որի հաճելի խօսակցութիւնը Տիգրանին նորանոր կեանք ու եռանդ էր ներշնչում։

Մանկահասակ ազնիկը ևս բուռն հաճոյք էր զգում, ժամերով նստել Տիգրանի մօտ, և պատմել նրան զանազան ասատանիներ, հեքիաթներ, որոնք լսել էր իր տատից. նա պատմում էր գեղի, հրի վերերի, մասին, պատմում թէ ինչպէս մօտակա անտառներում միշտ լիքն են գեղերով ու չար ոգիներով, որոնք օր ցերեկով փախցնում են ազնիկներին, գերում տղաներին, և այլն և այլն բաներ։

Տիգրանը լուռ ուշադրութեամբ լսում էր ազնիկին, չնայած նա նախապաշարուած երիտասարդ չէր, ու չէր հաւատում նրա պատմածներին, սակայն անտահման հաճոյք էր զգում ու միշտ ձգտում էր լսել նրա քանզարին հնչիւնները։

Մի անգամ ազնիկի խօսակցութեան ժամանակ տիգրանն ասաց.

—Ափսոս որ իմ ընկերներից ոչ մէկը այստեղ չէ, եթէ ոչ ես հէնց այս գիշեր կփորձէի գնալ անտառ և տեսնել այդ գեղերին։

—Եթէ այդքան ցանկալի է անտառ գնալ, ես կնկերացնեմ Ձեզ, ասաց տատանելու խօսեց աղջիկը.

—Մեծ ուրախութեամբ, բայց թույլ կաս արդեօք հայրդ.

—Ոչինչ ես կխնդրեմ. նա բարի մարդ է կթողնի.

—Ուրեմն փութանք հէնց այս գիշեր.

Երեկոյեան երբ մութը պատեց երկիրը, Տիգրանը և Արնահատը արդէն անտառումն էին. նրանք նստեցին թաւիշեա խոտերի վրայ. Մութը ամէն խառնում էր. հետզհետէ անտառը ան զանգուածի կերպարանք էր առնում. ոչինչ չէր նկատւում, այժմ միայն խուլ սոսափիւնով թռչունները էին, որ անցնում էին ճիւղից ճիւղ իրենց հանգստութեան յարմար վայր գտնելու. ու փչում էր մեղմ հովը, որը ընդհարւելով տերևների հետ մի տեսակ մելոդիական մեղեդի էր արձակում. անտառը այդ պահուն որքան ահռելի էր այնքան գիւթիչ ու կաշկանդող.

—Դու չե՞ս վախենում Արնահատ, հարցրեց Տիգրանը քիչ լռելուց յետոյ.

—Վախենամ. քո մօտ... քեզ հետ... աղջկայ ձայնը հընչեց այնքան անկեղծ ու այնքան հաստատ կար նրա մէջ գէպի այդ երիտասարդը, որը յարգանքով, շոգից նրա ստաջ և գոչեց.

—Ո՞հ սիրելիս, ես գիտէք որ դու այդէս պիտի լինէիր, ես գգում էի այդ, քո նամակդ կարդալիս, այսօր գիտամբ եկաս այստեղ քեզ փրկելու, ասես, խօսիր, ես սիրում եմ քեզ հազար բոլոր թելերով, ասես դու էլ սիրում ես ինձ թէ ոչ, և խաստանում եմ ես յաւիտեան քոնս լինելու...»

Պատասխանի փոխարէն աղջիկը թեքեց գէպի նա, և փարթամ մազերը թափեցին երիտասարդի երեսի վրայ. Տիգրանն ասաց. նրան իր բազուկների մէջ, և մթութեան մէջ լսեց սիրոյ առաջին համբոյրի ձայնը...

Անցել էր մի ամիս. Տիգրանն ու Արնահատը մի գեղեցիկ օր կանգնած Սուրբ Սեղանի առջև երդում էին իրար յաւիտենական սէր և հաւատարմութիւն.

Յաւիտեան Աղամորդի

Հին Նախիջևան

*
* *

Ախտս ծաղիկ, ախտս երազ,
Որ ժարում են իմ գրկում,
Ախտս հէգ բոյր, հեզահամբոյր,
Որ պիտի թռչի իմ հոգում...

Ախտս կեանքս որ շուտ թառամեց,
Էլ ուժ չունիմ, կեանք չունիմ...
Է՛, թող սիրտս մեռնի ցաւից,
Թող ողջ ցաւեր ես տանեմ։

Հէյ դուք չահել, ժատաղ կեանքներ,
Տուէք տանեմ ձեր գարդեր,
Տուէք տանեմ, հոգում թաղեմ,
Հազար աւ մի ձեր ցաւեր...

Դեռ գնում եմ բոյրը ծոցիս
Անուրջ, երազ, մարելով,
Ես գնում եմ արտասուքներս,
Աչքերիցս ծորելով...

Մ. Դարղունի

***

Զքնաղ բնութեան գիրկն եմ ընկած,
Նստած եմ միայնակ խոհրդում եմ տրտում,
Իմ հիւանդ սիրտս լալիս է կամաց
Ու նեղ վանդակում անվերջ թպրտում։

Զորակի գեփիւռ հովասուն քամին,
Անցնում է վազում, ու անհետ կորչում...
Լսում եմ յանկարծ բնութեան ծոցից,
Մեղմիկ շշուկով մի ձայն է կանչում.

Իմ կուրծքս թնդաց անհուն կարօտից՝
Իմ սրտիս սէրն էր կանչում ու կանչում
Խաբուսիկ յոյսեր, ունայն բնութիւն,
Գեռակն է միայն անդուլ շառաչում...

Գեռակի ձայն եմ լսում հեռուից,
Որ կանչում է նա անհրնդաս կանչում,
Ու ես յոգնել եմ արտուռներից,
Բայց կանչում է նա, անհրնդաս կանչում...

Մ. Փայլունի

ՀԻՆ ՎԷՐՔԸ

Ստեփանն ու Հեղինէն սիրում էին իրար, ու ուխտել էին չբաժանվել իրարից, սակայն Ստեփանը անգութ էր. նա դաւաճանեց Հեղինէին և ամուսնացաւ մի ուրիշի հետ։

Անցան տարիներ։ Հեղինէի ծնողները ուին նրան Ստեփանի մի ընկերոջը, բայց Հեղինէի սրտի աէրը մարել չէր կարող ոչ մի հանգամանք։

Այդ դժբախտը հին վէրքը սրտի ախ ու հառաչանք դուրս քաշելով, մի որդի ծնեց. բայց նա մայր չէր. նա երեխայի վրա նայում էր որպէս մի ուրիշի, ու միշտ անիծում էր այդ ծնունդը։

Նա ամեն կերպ աշխատում էր մի անգամ ևս տեսնել Ստեփանին, մի անգամ ևս մի խօսք փոխանակէր, սակայն հնարաւորութիւն չկար. անցել էր արդէն այն երանելի ժամանակները, երբ միասին էին ու կարողանում էին ազատ խօսքեր փոխանակել. նա ցանկանում էր միայն մի անգամ ազատ խօսէր Ստեփանի հետ յիշեցնէր նրան առաջուայ խոստումները և անիծել նրան, սակայն ուշ էր ուշ...

Իսկ Ստեփանը վերաբերւում էր դէպի նա ջերմ բարեկամութեամբ և կարծես չէր յիշում որ տարիներ առաջ խօստացել է Հեղինէի հետ կեանք կապել, իսկ այսօր չէր յիշում։

Այդ հանգամանքը չափազանց վրդովեց Հեղինէին ու սառուեց դողաց... Նա սարսափելի ցաւեցութիւն ու-

նէր խառնել Ստեփանի հին յիշողութիւնները, ու զարարճանալ անցեալի յուշերով...

Երեկոյ էր. նստած էր նա տան պատշգամբում ու նայում էր հեռաւոր լեռներին ու կանաչազարդ այգիներին—տղայք և աղջիկներ խումբ խումբ վերադառնում էին զբօսանքից. նրանց շարքերի մէջ նա Ստեփանին էր փնտռում, որ բարեբախտաբար չխաբեց. անցնում է Ստեփանը կնոջ հետ թեանցուկ դաշտային մի մեծ ծաղկեփունջ ձեռքին բռնած։

Հեղինէն այլայլեց, անորոշ յոյզեր նրան պաշարեցին է նա խուլ, երեխայի նման սկսեց հեկեկալ։

Նրան նկատեց Ստեփանը, ու բարեկամական խորին զգացմունքով լցուած հանդիպեց Հեղինէին, սակայն նա լուռ էր. Ստեփանի հարցերը պատասխանում էին առօրեայ ընտանեկան հարցերի շուրջը, իսկ Հեղինէն նրան չէր լսում. թոյլ և դողդոջուն, նա մօտեցաւ դաշնամուրին նստեց մօտ մի անկիւնում ու սկսեց նւագել. նրա յուշերի մէջ դեռ թարմ էին այն երեկոները, երբ երգում էին միասին այժմ էլ յիշեց այդ ու երգեց...

Երգեց և այդ երգով Ստեփանին ստիպեց յիշել իրենց երջանկութեան բոպէներից մէկը... Ու Ստեփանը յաղթահարեց բաց թեաց տեղում արձանացած։

Հեղինէն շարունակում էր նւագը։

Զեփիւռ հովը սարէն իջաւ
Պատեց սիրտս մառախուղ,
Լաց անսիրտ լաց արեւս հանգաւ
Անցաւ կեանքս որպէս ծուխ...

Նա չկարողացաւ շարունակել ու ամուր գրկած ջութակը ընկաւ գետին ուշաթափուած... Երեխան փարուեց նրանով, սակայն նա մոռացել էր ամեն ինչ։

Ստեփանը զդաց, հին վէրքի ամբողջ կսկիծը, մորմոքուած լքուած դուրս եկաւ սենեակից։

Ստեփանը մոռացել էր ծաղկեփունջը, Հեղինէն բացեց իր աչքերը, նայեց նրան ապա մօտեցաւ վերցրեց կրծքի վրա, սակայն նա սառեց, ընկաւ գետին իսկ նա չփորձեց կրկին վերցնել, ամեն ինչ պարզ էր։

Միւս օրը Ստեփանը անհետացել էր քաղաքից։

Երևանդ Տ. Գ.



ԱՆԱՊԱՏԻ ԾԱՂԻԿԸ

Անծիր ու անվերջ անապատի մէջ,
Ընկաւ իմ ուղին, նոր յոյս փնտռելու,
Ա՜խ, այդ ուղիներն անհաշտ ու անվերջ,
Գալիս են մենակ ինձ հետ խորհելու...

Զորացած ու մերկ ժայռերի վրայ,
Քամիներն էին մենակ հեծեծում,
Ու ես քայլում եմ խոհուն, մտորուն,
Իսկ սիրտս, սիրտս արիւն է լացում։

Ծաղիկ եմ փնտռում չոր անապատում,
Խաբուսիկ յոյսեր, անսահման տենչեր,
Ցնորք ու մորմոք, անվերջ ու անհատնում,
Անրջոտ ճամբայ, անվերջ երազներ,..

Քայլում եմ մենակ, այնտեղ հեռուում,
Տապից պապակուած որպէս մի ծաղիկ,
Կեանքից մենաւոր ծաղիկ է փայլում,
Որպէս ծովերի, միակ միակ բիւրեղիկ...

Իմ սիրտս պապակ, իմ սիրտս փափակ,
Այն միակ ծաղիկն միայնակ ընկած—

Նրան է տենչում հոգիս մենաւոր
Այն միակ ծաղկին միայնակ ընկած։

Բայց իրօք յոյս կայ աշխարհի վրայ
Որ ինձնից հեռու դուրս անապատից
Ուրախ և զուարթ ծաղիկները շատ կան
Թէկուզ և ըմբոստ, հեռու իմ սրտից։

Ներսս նայեցի, էլ յոյսեր չկար,
Մենաւոր ծաղկին ես նուիրեցի,
Թառամած ծաղիկն իմ կրծքին սեղմած,
Խուլ հեծեծանքով, գրկեցի լացի...

Մ, Դարդունի

1001
2309

ՄԱՅՐԸ

Էսկիզ

Ամբողջ վեց ամիս ծերունի Յովակիմը հիւանդ էր. մահը օր աւուր մօտենում էր նրան ու գցում նրան ծանր մտատանջութիւնների տակ. Նա մտածում էր իր հոգատար կնոջ Մարիամի և փոքրիկ երկու տարեկան մանկան վրայ, որոնք իրա մահից յետոյ սովի ճարակ էին դառնալու։

Երեխան դեռ նոր էր սկսել փթթել, ծաղկել. նրա հիւանդ մտքի այդ ծանր բեռը որ կոշմարի նման ճնշում էր նրա հոգին, դեռ նոր էր սկսել սոխակի նման գեղգեղել և նորափետուր թռչնիկի նման այս ու այն կողմը թռչկոտել։

«Խեղճ զաւակս» մրմնջում էր ծերունին գոնէ դու մի մօտիկ բարեկամ գտնէիր այս օտար վայրում, որ քո հայրիկի մահից յետոյ պահպանէր քեզ. որքան անբախտ ես անճար մանկիկ...

Հիւանդութեան վեց երկար ու ձիգ ամիսներում տան միակ հոգսը ընկած էր Մարիամի վրա, որ օրական կար անելով հազիւ կարողանում էր 30 40 կոպէկ վաստակել, և դրա-

նով պահպանել իրանց հիւանդ գոյութիւնը,.. Խեղճ կին. . ապա որտեղից վճարի բժիշկներին, որ ամուսնուն ազատեն մահուան ճանկերից.

Վերջինս բանւոր ընկերները առաջին օրերը հանգանակութեամբ օգնում էին. բայց մինչև երբ.. Այժմ բոլորն էլ ընդհատել են օգնելը այժմ դժբախտ կինը ստիպւած է նորից խնդրել բայց ո՞վ է լսողը...

Տան եղած չեղածը ծախել և դեղեր էին գնել մի հին մահճակալից և ժանգոտած պղնձից բացի ոչինչ չէր մնացել։

Խեղճ կին... կարծես նրան բաւական չեն ընտանիքի դարդն ու ցաւը, անորոշ մարդիկ կեղտոտ միտուքներով միշտ հետամուա էին լինում դժբախտ կնոջ պատիւը գցելու, իսկ վերջինս կամաւոր մահ կընդունէր քան իր պատիւը կթողնէր արտաւորելու...

Նա յաճախ այն աստիճան յուսահատւում էր, որ ուզում էր թողնել ամեն ինչ, կորչել, անհետ կորչել, բայց ամեն անգամ երբ ականջն էր ընկնում հիւանդ ամուսնու ծանր տընքոցը հոգեկան ախն ու հառաչանքները, երեխայի լացն ու կոծը սիրտը մորմոքւում էր ու միայն բաւականանում էր լալ, ու խորը լալ...

Մարիամը թողել էր իր նախկին աշխատանքը՝ կարը, այժմ լւածք էր անում որովհետև այս անգամ հինգ տասը կոպէկ սովորականից աւել էր ստանում։

Առաւօտը Մարիամը վեր կացաւ, կաթսան լցրեց ջրով, դրեց օջախի վրա, որ գտնւում էր հիւանդի մահճակալից ոչ հեռու նրան տաքացնելու նպատակով, ու ինքը գնաց հարևանից տաշտը բերելու։

Բաւականին անցել էր, Մարիամը դեռ չէր վերադարձել հիւանդը չար գուշակութիւններ էր անում, Մարիամի ուշանալու համար և միշտ անսովոր կսկիծից գալարւում էր իր տեղում։ Երեխան դարթնեց բացեց աչքերը, նայեց մրոտւած առաստաղին շուռ եկաւ նայեց չորս կողմը, ու «մայրիկ» կանչեց։

Հիւանդը նրան իր գիրկն առաւ դողդոջը շրթունքներով համբուրեց մանկիկի ճակատը, իսկ երեխան զգալով մայրիկի բացակայութիւնը ճչաց, լաց եղաւ կարծես նա ուզում էր խօսել ձայն տալ, մայրիկ պահանջել, որ իր ծարաւը յագեցնի իր կաթով, բայց այդ լաց ու կոծը միայն հիւանդն էր լսում ու յուսահատութիւնից վեր կացաւ, փորձեց գնալ հար-

ևանի տուն Մարիամին գտնել, սակայն ոտքերը թուլացան ու ընկաւ բակում հարևանի շէմքի վրայ...

Երեխան շարունակում էր թպրտալ անկողնում, ապա փորձեց կանգնել, և անկարող լինելով ցատկեց մահճակալից, ու ընկաւ գլխի վեր եռուն կաթսայի ջրի մէջ։

Մի քանի րոպէի մէջ նա եփւեց, ձայնը կտրւեց, միայն ոտքերի ծայրերն էին երևում կաթսայից դուրս։ Հիւանդին հարևանները ձեռքերի վրայ ներս բերին, որը առաջին իսկ հայացքից նկատեց երեխան չկայ ապա աչքովը ընկաւ ջրով լի կաթսան ու նկատեց բալիկի տոտիկները միայն...

Ներս ընկաւ Մարիամը. նա զգաց վտանգի ամբողջ մեծութիւնը ու սոսկաց... ապա երկու ձեռքով խփեց իր գլխին, նետւեց դէպի կաթսան, ապա մի վերջին հեգնական հայացքով դիտեց եփւած բալիկին, հոգևարք հիւանդին, և ու ամբողջ ուժով դուրս թռաւ խրճիթից ժահը ու սառսուռ տարածելու շրջակայքում։

Դուրսը մութն էր ու խաւար. միայն քամին է որ անձրևախառն շփում էր պատերին ու լուսամուտներին և մերթ յերթիկից ժաղւում էր նեղլիկ խրճիթի մէջ. հիւանդը կրկին ընկաւ մահճակալի վրայ, մոռացած ամեն ինչ կարծես ուղեղը տյլևս չէր գործում, նա անզգայացել էր... Դուրսը քամին ու անձրևը շարունակում էին անսահմանլռութեան մէջ հեկեկալ...

Մի քանի օրից յետոյ Մարիամի դիակը գտնւել էր ծովի ափին խեղճը բաղդի հոսանքից քշւած, իրեն նետել էր ծովը, իսկ հիւանդը դեռ ընկած եփւած մանկիկի մօտ անհամբեր սպասում էր նրան...

Արմէն Անանեան

Թիֆլիզ

*
* *

Այս աշխարհում շատ շրջեցի,
Հանգիստ կայան չգտայ,
Որքան դռներ ես բախեցի,
Ինձ կարեկից չգտայ...

Սիրտս տենչած բախել դուռը
Սիրոյ անմիտ հմայքի՝
Ինձ տեղ չկար, ու փակ մնաց,
Ոսկի դռներն այն փառքի.

Երբ գերեզման հասայ լռիկ,
Բացուեց դուռն անմահութեան
Հողն ինձ գրկեց, ու խոր լացեց,
Եւ գրկեց նինջ յաւիտեան...

Ախ, գերեզման լաւ էր հիմի
Էլ ոչ լաց կայ, ոչ կայան
Էլ չի երգում ուռին վրաս,
Մի չքնաղ երգ մոգական։

Անդորը կեանքով ես ննջում եմ
Մութ ու խոնաւ իմ վայրում,
Ու միշտ ուրախ, երջանիկ եմ,
Այս միայնակ աշխարհում...

Թիֆլիս

Դարդունի

Էլ քեզ չի՛ սիրել..

Խաղաղ գիշերին, քաղցր քնիս մէջ,
Քեզ նորից տեսայ դալուկ տրտում,
Վառվռուն կրակը աչքերիդ անշէջ.
Դու իմ դէմ եկած անէծք էիր կարդում...

Օ՜... ես անզօր եմ, անզօր քո առաջ,
Գթա ինձ խնդրեմ... Մի դատապարտիլ,
Որ վաղուց սիրող սիրտս այսուհետև,
Էլ քեզ չի՛ սիրել, էլ քեզ չի՛ սիրել...

Բագու

Աւիսի

* *

(Նվէր օր. Լ-ին)

Այն լուսնաշող երեկոյեան
Ես վշտահար ու տրտում
Քեզ մօտ անուշ ու մեղմաձայն
Մի երգ էի մրմնջում...

Լռիկ-ճնշիկ երգում էի
Ես իմ երգում վառ աստղեր
Ջերմ կարօտով տենչում էի
Լինել նոցա միշտ ընկեր...

Նազան-հովիկ, ծաղիկ դալար
Երգիս գաղտնիքն գիտէին
Ա՛խ դու միայն չհասկացար
Քո աչերը երգողին...

Երուանդ Տէր-Գրիգորեան

ՅՈՅՍ...

Քրքրուած ու մաշուած սիրտս, որ իրեն միշտ անդունդներն էր ձգում՝ դարձեալ տրոփեց, դարձեալ տենչած...

Դու, որ գիտէիր ծաղրել իմ դժբախտ էութիւնը վերջին հրաժեշտի ժամին չմոռացար ասելու «յիշիր ինձ»...

Յիշում եմ մայիսեան ուշ երեկոյին, երբ անտառ էինք իջել մեր սրտերը բանալու. երբ իրար չհասկացանք, երկուաս երերում էինք ու դողում...

Զգացիր արդեօք որ ես մոռացել էի ինձ, ու սլանալու դէպի եթեր ամպրոպը գրկելու...

Ներկայութիւնդ ինձ այնքան չէր հետաքրքրում ինչքան քո խորին դաղտնիքները՝... Դու լուռ էիր ու մտազբաղ։ Յիշում ես, որ խնդրեցի քեզ քո սիրտը բանալու, դու պատասխանեցիր վէրքոտ է նա. ես հասկանում էի քեզ, բայց դու ինձ չհասկացար...

Յիշում եմ երբ անջատման ժամին ասացիր «յիշիր ինձ, գուցէ կեանքում կպատահենք այլեւս... Ու, այդ խօսքերն է այժմ իմ սիրտը մաշում։

Ես այժմ հեռու, անջատուած քեզանից միշտ երազներում քեզ եմ տեսնում ու կրկնում «գուցէ կեանքում չպատահենք այլեւս...

Գուցէ... իսկ պատկերդ, իսկ սիրտդ, որ կապել ես իմ սրտին ինչպէս ցողուած վարդի թերթիկները պարուրուած իրարով...

Փորձել իմ սիրտս անջատել, փորձել եւ կտրել լարերը, բաժանել իրարից, բայց նրանք միշտ իրար են ձգտել, իրար են տենչել...

Կեանքում ոչինչ, ոչինչ չսիրեցի, միայն քո հոգին եմ գուրգուրել, իսկ դու, չկաս։

Ես այժմ զգացի, կանգնեցի կեանքի բեկորների վրայ սւ մի շիտակ հայեացքով դիտեցի ամեն ինչ, և հաւատացի որ ոչինչ է ամեն ինչ... Ոչնչութիւն էիր նաև դու, որ գիտէիր կեղծել և շողոքորթել...

Այժմ մահւան երգն է հնչում իմ ականջում ու պատրաստ էի յաւերժը գրկելու...

Ամեն, ամեն ինչ յանձնէլ էի աշխարհին և սէր և և ծաղիկ, և բոյր ու երազ, ցնորք ու տենչ, սակայն բեռս դարձեալ շատ ծանր է իմ ուսերի վրայ տանում էի մարդկութեան դարդ ու ցաւերը, ու քայլում էի լուռ ու վհատ...

Այնտեղ հեռւում մարդիկ փորում էին իմ յաւերժական բնակարանը, այդտեղ էի ուզում թողնել իմ տանջանքի բեռը...

Կանգնած եմ նրա առաջ զգում եմ, որ ամբողջ տիեզերքը իմ ոտքերի տակ խուլ ճնշում է ու լալիս. զգում էի որ բոլորի էյութիւնը այստեղ իմ ոտքերի տակ հեծում է ու լալիս... Ու չկա կեանք, չկա աշխարհ թէ կեանք, թէ աշխարհ այս փոսն է այս իմ բնակարանը...

Զորս կողմս լուռ էր ու խաւար, ու սոսկացի.

Հեռուից մի դիւթական երգի ձայն լսեց, ու նրա հետ սկսեց մի աղօտ լոյս փայլել զգացի որ այն քո սեռնեակի լոյսն է որ դարձեալ կախարդում է ինձ. զգացի որ միայն դու ես ողբում իմ կորուստը...

Ծաբուսիկ յոյսեր. բնակարանս նեռեցի տանջանքի հակա բեռը, ու կրկին քայլեցի աշխարհի ճամբէքով ես

քեզ էի հասնում, կրկին մթնեց ամեն ինչ, ու կրկին ամեն ինչ մութն է ու խաւար...

Կորցրի յաւիտենական բնակարանս իմ աչքերը մըթնում էին ու մթնում. ու ընկաւ յուսահատ...

Ես ոչ մի յոյս, ոչ մի խրախոյս մինչեւ քաւին է վազում, ու ողբում բարձրաձայն. . Ափսոս որ իրականութիւն էր այդ և ոչ երազ. ու ալեկոծում է սիրտս, վրդովում հոգիս վերջին ճիգս գ·ործ դրեցի, շոշափեցի շուրջս ու ձեռքերս ունայնութեան փոշու մէջ թաթախեց Ուզում էի քնել, յաւիտեան քնել, բայց մէկը, գուցէ մի ցնորք շշնջում էր «յո՛յս, յոյս, ել և ապրիր յոյսերով»։ Մի ուրիշը «ոչնչութիւն, ոչնչութիւն կեանքն է երազ ու աննպատակ. ու ես լուռ և անվհատ ունկնդրում էի բաղդի ձայներին իսկ սիրտս քիզ էր տենչում, իսկ դու չկայիր...

Միսակ

ՍԵՐԸ

Նստած սենեակում, գլ··ւխս առած ձեռքերիս մէջ կռթնած սեղանին լուռ մտորում էի անցեալի վառ յուշերից, որոնք կանգնել էին երևակայութեանս առաջ որպէ·ս դարաւոր արձաններ։

Ցիշում էր հայրենիքիս գետակի փրփրադէզ ալիքների ֆշշոցը, ահեղ գոչիւնը ու ցանկանում էի լինել մի կաթիլ, խառնուել այն ալիքների հետ և զարնուելով քարերին առաջ գալարուէի։

—Բայց... մտածում եմ.—չէ, այդ չեմ ուզում ..

Ցիշում էի հայրենիքիս նորաբաց ծաղիկները, քաղցրաբոյր մանուշակը, որը իր խոնարհ գլուխը համեստութեամբ ցոյց տալով խոտերի միջից անուշ ժպտում է և հրաւիրում աշխատասէր մեղուին իրանից անուշդ քաղելու, ու ցանկանում էի լինել մի փոքրիկ մանուշակ թագնուած խոտերի մէջ և յոյց

տալով գլուխս, հրաւիրէի աշխատասէր մեղուին ասելով.—Սիրուն մեղու, եկ, նստիր զառ թերթիկներիս վրայ և ծծիր հիւթս, որպէս զի մեռնեմ ..

—Բայց... մտածում եմ.—չէ, ես մեռնել չեմ ուզում...

Յիշում էի հայրենիքիս ջինջ լեռների կատարին բուսած վարդի թուփը, որի վրայ սոխակը նստած գեղգեղում է և անուշ ճլվլոցով դիւթում ամեն ինչ ու ցանկանում էի լինել մի վարդ մախմուռ թերթիկներով և սոխակը գար նստէր թերթիկներիս վրայ ու սիրէր ինձ. և յանկարծ երևար մի որսորդ ուղղէր հրացանը խփէր ու սպանէր նրան և ես մնայի մենաւոր սգաւոր և սգայի մեռած սոխակիս սէրը...

—Բայց... մտածում եմ.—չէ, ես սգաւոր չեմ ուզում դառնալ...

Յիշում էի հայրենի լեռներում թափառող «Բնութեան զաւակին», որ սրինգը բերնին, նստում է վեհ ժայռերի կատարին ու նուագում իր «սիրոյ մեղեդին» «եարի սէրը» հետն էլ արտասւում, ու ցանկանում էի լինել «բնութեան զաւակ» գլուխս ապրշով փաթաթած և վեհ լեռների ջինջ կատարներից երկէր ու երգէի մաքուր սէրը՝ սէրը իմ սրտի...

—Բայց... մտածում եմ.—չէ, ես չեմ ուզում հովուի սէր։

Յիշում էի մեղմ զեփիւռը, որը հանդարտ սուլալով սիրած եարից բարև է բերում, և ես էլ էի ուզում լինել մի թեթև զեփիւռ, սուլալ և սիրոյ համբոյրներ տալ սիրած եարին, տալ և հեռանալ...

—Բայց... մտածում եմ.—չէ, ես չեմ ուզում անսէր մընալ. ես էլ եմ ուզում սիրել...

...Յանկարծ յիշում եմ այն երեկոն, երբ նրա հետ նըստած գետակի ափին խաղում էի ջրի ալիքների հետ, մերթ բռով առնելով ջուրը, ցանում էի նրայ լուսատիպ երեսին, և նա ժպտում էր, և այն ժպտի մէջ ես գտնում էի ամեն ինչ, և՛ կեանք, երջանկութիւն և՛ համբոյր և՛ սէր ..

—Ո՜հ, թողէք, թողէք, ես ուզում եմ... Ես պաշտում եմ... սէրը...

...Հուր տուէք ապրիմ, ապրիմ ու սիրեմ...

Ներսէս Հայկազունի

Թիֆլիս

ՆՐԱ ՄԱՐՄԻՆԸ

(Օ. Դրմովից)

Բանաստեղծն ասաց կոյսին.

—Տուր ինձ քո մարմինը, դու չգիտես նրա գեղեցկութիւնը. քեզ համար նա մի ծածկված գիրք է։ Դու, որ ունես այդ հարստութիւնը, այդ դեռ չի նշանակում, թէ նա միմիայն քոնն է։ Ինձ տուր այն։

Նա լուռ էր։

—Կարող ես դու նրան աւելի գեղեցկացնել, երևան հանել նրա մէջ թաղնված ամբողջ փարթամութիւնը, ասաց կոյսը։

—Ոչ, այդ ես չեմ կարող.

—Ես կառնեմ քո մարմինը և ցոյց կտամ բոլորին։ Յետոյ էլի կը վերադարձնեմ քեզ.

—Ես չը գիտեմ նոյնիսկ, թէ դուք ինչի մասին էք խօսում։

—Ուրեմն ինձ տուէք, նրանք, որոնք չը գիտեն գնահատել գեղեցկութիւնը, թող տան այն բանաստեղծին։

Մի քանի ժամանակից յետոյ նա կարդաց կոյսին մի փոքրիկ պատմութիւն, անուշահոտ ու թարմ ինչպէս ցողի կաթիլը վարդենու տերևի վրայ։

—Ինչպէս լաւ է, ասաց կոյսը.

—Ահա տեսնում ես. ես կատարեցի իմ խոստումը բաւականութեամբ ասաց բանաստեղծը։

Նա մի քիչ կարմրեց, թեքեց գլուխը և հարցրեց.

—Եւ այդ է բոլորը։

Բանաստեղծը նայեց նրա թաւ արտևանունքներին և ծիծաղելով ասաց։

—Այո, բայց ես դէն եմ ձգել աւելորդը։

Թարգմ. Ե. Ց. Դ.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ՆՈՐ ՈՒՂԻ» գրական ալմանախ
Ալէքսանդրապոլ գինը 10 կ.
№ 1, 2, 3,

Վերջին տարիներս մեր սկսնակ պատանիների և երիտասարդ գրողների մէջ մի տեսակ եռանդուն գործունէութիւն է մուտք գործել, որոնք բացի գրականութեամբ պարապելը, աշխատում են և ընթերցասէր հասարակութեան նոր-նոր ընթերցանութեան նիւթեր տալ։

Այդ մասամբ ընդունելի է մեր պատանիների կողմից սակայն ոչ ամենքի համար, որոնք նախ քան իրենց գրքի թոթովանքները ընթերցողին հրամցելը—դեռ շատ բան ունին սովորելու ուրիշներից։

«Պատանի» ալմանախը, որ ամենատարածուած և առաջին օրգան է մեր պատանիների և երիտասարդ գրողների մէջ—մեծ յեղաշրջում առաջ բերեց այսպէս ասած այն գրելացաւով բռնուած սկսնակ և երիտասարդ գրողների շրջանում, որից ամեն մէկը—առանց կեանքն ու նրա շրջապատը ուսումնասիրելու—տենչում են բանաստեղծ և կամ վիպասան դուրս գալ ապագայում։

Այդ նոյն տենչանքն ունեն մեր այժմեան շատ պատանիներ ու սկսնակ գրողներ. որոնցից սակայն շատ քչերին կը յաջողուի քայլել իրենց գրական գործունէութեամբ և ապագայ խոստանալ մեզ։

Մեր բոլոր գաւառական քաղաքներումն էլ համարեա թէ նոր նոր գրական ալմանախներ են լոյս տեսնում ու անյետանում, որոնց խմբագրութեան գլխաւոր նպատակն է լինում—ինչպէս նրանք գրում են իրենց «յառաջաբան»-ներում, որ մի նոր ուղի են կամենում բաց անել մեր սկսնակ պատանիների

գրողների մէջ, կամենում են զարկ տալ մեր նորագոյն մատաղ գրականութեան, կենդանի գործնէութիւն են ուզում մտցնել այն անձանց մէջ, որոնք որ զգում են, որ այդ կարող են զին ւել կեանքի և գրական ծանր զէնքերով և կռուել խաւար մտքերի դէմ—լոյս և գիտութիւն տարածելու այնտեղ։

Սակայն այդ ալմանախները, որոնց մեծագոյն մասը այժմ թագնուած են սև հողակոյտերի տակ,—անւամբ միայն գրական ալմանախներ մնացին, իսկ կենդանի գործով, շատ հեռու իրենց «յառաջաբաններում» ընդգծած նպատակներից...

Բայց հեռուն չը գնանք։

Մեր նպատակն է այստեղ մի ակնարկ ձգել Ալէքսանդրոպոլում լոյս տեսնող «Նոր-Ուղի»-ի վերայ, որ նոյնպէս սկսնակների օրգան է։

Սա առաջինն է սկսնակների աշխարհում այն ալմանախների մէջ, որը «Պատանի»-ից յետոյ, աչքի է ընկնում իր առաջադիմութեամբ և խոր արմատներ ձգում է ընթերցողի սրտում։

Լոյս է տեսել «Նոր-Ուղին» ընդամենը, երեք գիրք։

Ուշադրութեամբ կարդացող անշուշտ զգում է որ «Նոր-Ուղին» յառաջադիմութեան փորձեր է անում և դա նորան մասամբ յաջողւում է։

Նաև, ողջունելի է «Նոր-Ուղին» այն բանի համար, որ սկզբից զգացել է, որ ընթերցող հասարակութեան, ամենից առաջ մատչելի գնով պէտք է բաց թողնել ալմանախը, իսկ երկրորդ, որ նա առաջին իսկ անգամից չի տուել այնպիսի նիւթեր, որ անհասկանալի և ծանր լինի ընթերցանութեան համար։

«Նոր-Ուղիի» խմբագրութիւնը անշուշտ գիտէ նիւթերի զգեցիկ ընտրութիւն անել և դա ապացոյց է, որ նրա խմբագրող ձեռքը, անպայման ծանօթէ նիւթերի ընտրութեան և դասաւորութեան գործում.

Մեր նպատակից դուրս է առ այժմ մի առ մի քննութիւն առնել նրա աշխատակիցների եռանդն ու ձիրքը, սակայն այսքանը կասենք, որ «Նոր Ուղի» համար կարևոր ոյժեր են կազմում պ. պ. Գառնիկ Ղազարեան, Ֆ. Աշօտ, Յ. Այլամազեան, Պահարէ, Հ. Մազմանեան, Գուրգէն Յ. Ղարիբեան և ուրիշները։

Կրկնում ենք, որ «Նոր-Ուղին» աչքի է ընկնում մեր սկսնակ պատանիների և երիտասարդ գրողների մէջ որպէս յառաջադիմող մի օրգան, ուստի նրա խմբագրութիւն էլ աւելի աչալուրջ պիտի լինի ալմանախի հրատարակութեանը։

Բագու

Դ. Մեցիկ

ՊՕՍՏԱՐԿՂ

Ն. ԱԽՏԱ—Մկրտիչ Ղազարեանին. աշխատեցէք խոյս տալ աղուղական բանաստեղծութիւններից, ուղարկեցէք նորերը. ուղարկածներդ թոյլ էին։

ՕՇԱԿԱՆ—Տաճատին—արձակ գրուածները ֆեզ աւելի են յաջողւում քան ոտանաւորը. աշխատեցէք բառերը տեղին գործ ածել. խորհուրդ կտայինք նախ քան գրելը ընթերցանութեամբ շատ պարապէիք։

ԵՐԵՒԱՆ—Ե. Ժահմարեանին. Ձեր ոտանաւորները ֆեաց երկրորդ հանդարին-ուղարկեցէք արձակները.

ԲԱԳՈՒ—Աւիսի-ին ուղարկեցէք արձակ գրուածքներ. ուղարկուածները կտպւի.

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ—Խ. Ադամորդի. կարդացէք վերի պատասխանը։

ԹԻՖԼԻՋ—Ա. Անանեանին ուղարկեցէք Ձեր ասած պոէման.

» Ե. Տէր-Գրիգորեանին. ուղարկեցէք թարգմանութիւններ.

ԷՋՄԻԱԾԻՆ—Ն. Հայկազունուն. աշխատեցէք խոշոր ապդեցութիւններից հեռու մնալ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու երգ	Միսակ Յովհաննիսեան
Ընկնող յոյսեր (բանաստ.)	Մ Փայլունի
* * * (բանաստ.)	Տարագիր
Մենուեթեան երգերից. (բանաստ,)	Տաճատ.
Առանց տեսնելու	Խ. Ադամորդի
* * * (Բանաստ.)	Մ .Դարղունի
* * * (Բանաստ.)	Մ. Փայլունի
Հին վէրքը	Երուանդ տ.Գ.
Անապատի ծաղիկը (բանաստ)	Մ. Դարտունի,
Մայրը	Արմէն Անանեան
* * * (Բանաստ.)	Տարագիր
Էլ քեզ չի սիրիլ (Բանաստ.)	Աւիսի
* * * (Բանաստ.)	Երուանդ Տէր Գրիգորեանի
Յոյսը...	Միսակ
Սէրը	Ներսէս Հայկազունի
Նրա մարմինը	Թարգ. Ե. Տ. Գ.
Գրախօսական	
Պատ-արկղ	
Յայտարարութիւններ	

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑԻԱԾ Է 1914 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱՆԻ Գրական գեղարուեստական և քննադատական ալմանախ տարեկան վեց գիրք Տարեկան արժէ Թիֆլիզում 1 ր, դուրսը 1. 25 կ. հասցէն Тифлисъ. Ходживанская № 5 ред. „Патани" М. Эприкянцу

ՇԱՒԻՂ Ժողովրդական պատկերազարդ ամսագիր. տարեկան չորս ռուբլի հասցէն՝ Баку ул. Гоголя № 11 Смбату Юзбашу.

ՀՈՐԻԶՈՆ Գրական քաղաքական և հասարակական օրաթերթ, տարեկան արժէ 8 ր. կէս տարին 4 ր. 50 կ. հասցէն՝ Тифлисъ, ред. „Оризонъ"

ԳԱՒԱՌԻ ՁԱՅՆ Գրական հասարակական և քաղաք. գիւղատնտեսական կօօպերատիւ լրագիր լոյս է տեսնում շաբաթական երկու անգամ, արժէ տարեկան 3 ռուբ .հասցէն՝ Александрополь ред. „Гавари Цайнъ"

ԽՕՍՔ Շաբաթաթերթ. տարեկան Երևանում 3 ր. Երևանից դուրս 3 ր. 50 կոպէկ. հասցէն Эривань ред. „Хоскъ" Бебутовская № 26.

ԱՐԵՒ Գրական հասարակական շաբաթաթերթ որը ունենալու է անկախ, առաջադիմական ուղղութիւն արժէ տարեկան 3 ռուբլի. առանձին համարը 3 կոպէկ. հասցէն Александрополь. редакція „Аревъ"

ԳԱՂՈՒԹ Գրական հասարակական և քաղաքական շաբաթաթերթ հրատարակւում է Ռոստովում. տարեկան արժէ 4 ռուբլի. հասցէն Ростовъ н/д ред. Гагутъ Дмитревская № 118

ԱՐԵՒ Գրական հասարակական և քաղաքական օրաթերթ. բաժանորդագինն է 7 ռուբլի կէս տարին 4 ր. հասցէն Баку редакція Арм. газ. „Аревъ" Торговая № 7

50

Կոյս է տեսել Սիսակ Յովհաննիսեանի

1) ՎՇՏԻ ՅՕՂԵՐ (սպառուած) . . . . . 7 կ.
2) ՄՐՄՈՒՆՋՆԵՐ (սպառուած) . . . . . 10 կ.
3) ՃԱՌԱԳԱՅԹ (ժողովածու) . . . . . 10 կ.

«ՃԱՌԱԳԱՅԹ»-Ի գրադարան № 1

Շուտով լոյս կը տեսնի—ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎԻ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Թարգմանութիւն ԵՐՈՒԱՆԴ ՑԼԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԷԿ

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Դիմել՝ Тифлисъ Большая-Ванкская № 7
Мисаку Оганесянцъ Կամ Թիֆլիսի բոլոր գրավաճառներին։